ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1305-Ա « 10 » ապրիլի 2025 թ.

ՀԱՂԹԱՆԱԿ ԹԻՎ 118-23 ԵՎ ԹԻՎ 118-23Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել Աստղիկ Բաղալյանի լ/ա Օգսեն Դավիթյանի դիմումը՝ Հաղթանակ թիվ 118-23 /վարելահող/ և թիվ 118-23ա /մելիորատիվ հող/ հասցեների հողամասերի սահմանների ճշտման և հատակագծերի հաստատման մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի պետական Ա014046 ակտը՝ տրված 25.11.1994թ., Երևան քաղաքի Մալաթիա- Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 25.01.2013թ. ԵՄԴ/1089/02/12 վճիռը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 15.12.2023թ. հ.9020 և սեփականության իրավունքի 15.12.2023թ. հ.9019 վկայագրերը, Կադաստրի կոմիտեի 21.02.2025թ. հ.ԱՏ-21022025-01-1303 տեղեկանքը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ թիվ 118-23 հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ կազմում է 3199.4քմ՝ ակտում ամրագրված 3200.0քմ մակերեսի փոխարեն, իսկ Հաղթանակ թիվ 118-23ա հասցեի հողամասի մակերեսը փաստացի չափագրությամբ և ակտով կազմում է 2400.0քմ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի քննարկվող հողամասը գտնվում է 12-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից կազմված հատակագիծ-սխեման ու Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Ն/11370-25 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Հաղթանակ թիվ 118-23 հասցեի /վարելահող/ և Հաղթանակ թիվ 118-23ա հասցեի /մելիորատիվ հող/ հողամասերի սահմանները որոշվում են համապատասխանաբար՝ 3199.4քմ և 2400.0քմ մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ